



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐ, 2015

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՄԱՂՄՈՍ 36

### ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ

**Տ**էր, քու սերդ երկինքին պէս անսահման է. հաւաքարմութիւնդ՝ մինչեւ ամպերը կը հասնի: Արդարութիւնդ լեռներուն պէս բարձր է, դաքասպաններդ՝ ովկիանոսներուն պէս խորունկ: Դուն է որ կը հոգաս մարդոց թէ անասուններուն կարիքները, Տէր: Ի՛նչ թանկագին է հոգածութիւնդ, ո՛վ Աստուած. բոլոր մարդիկ քու թելերուդ հովանիին կ'ապաւինին: Քու փաճարիդ առաք օրհնութիւններով կը լիացնես զանոնք, շնորհքներու քու գեպեդ խմել կու փաս դուն անոնց: Որովհետեւ դուն ես կեանքի աղբիւրը. լոյսովդ է որ մենք լոյսը կը փեսնենք: Մշտական ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ՝ որոնք քեզ կը ճանչնան, եւ արդարութիւնդ անոնց վրայ՝ որոնք սրտով ուղիղ են: Թոյլ մի՛ փար որ ամբարփաւան մարդիկ ընկճեն զիս, չարագործները յաջողին զիս հալածել: Հոն՝ պիտի իյնան բոլոր անոնք՝ որոնք անօրէնութիւն կը գործեն. պիտի փապալին եւ ալ բնաւ չկանգնին:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՂՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒԲՆ ՆԻԻԹԸ



ԵԼԻՅ ԼԴ (34) ԳԼՈՒԽ



## ՔԱՐԷ ՏԱԽՏԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿՐՈՐԴԸ (34:1-9)

Հակառակ ժողովուրդին անհնազանդության, միւս կողմէ Մովսէսի միջամտության ու բարեխօսության, անգամ մը եւս Աստուած Իր ողորմութիւնը կը ցուցաբերէ: Այս գլուխը մեզի կը ներկայացնէ Աստուծոյ գութը եւ ողորմութիւնը, եւ այս բոլորը ցոյց կու տան Աստուծոյ ինքնութիւնը, անով ճանչնալու զԱստուած, ինչ որ պիտի փափաքէր Մովսէս տեսնել, եւ Աստուած խոստացաւ ցոյց տալ Մովսէսի Իր երեսը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ Աստուծոյ մեծամեծ գործերը, եւ այդ գործերուն մէջ ամենակարեւորը իր ողորմութիւնը, ներողամտութիւնը մարդուն նկատմամբ:

Եւ ահա Աստուած Մովսէսին կը պատուիրէ քարէ փախարակներ պատրաստել որպէսզի անոնց վրայ անգամ մը եւս գրէ առաջուան փախարակներուն վրայի խօսքերը: Այդ խօսքերը ուրիշ բան չէին եթէ ոչ Աստուծոյ պատուիրանները, առաւել եւս Ուխտ կնքուած Աստուծոյ եւ Իր ժողովուրդին միջեւ: Այդ խօսքերով պիտի դաստիարակուէր ու առաջնորդուէր այդ ժողովուրդը:

Աստուած ամպով իջաւ ու հոն Մովսէսի քով կեցաւ: Անպով իջնելը ցոյց կու տայ Աստուծոյ փառքը եւ Անոր շոշափելի ներկայութիւնը: Եւ ահա Մովսէս կ'արտայայտուի ըսելով. «Տէրը, Տէր Աստուածը, ողորմած ու բարերար, երկայնամիտ եւ առաք ողորմութիւնով ու ճշմարտութիւնով: Հազարներուն ողորմութիւն ընող, անօրէնութիւնը, յանցանքը ու մեղքը ներող, բայց յանցաւորը ամենեւին անպարտ չի թողոր, հայրերուն անօրէնութիւնը որդիներուն վրայ ու որդիներուն որդիներուն վրայ, մինչեւ երրորդ ու չորրորդ ազգը հապուցանելով»: Այս արտայայտութիւնները ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ ստորոգելիները, այսինքն Անոր նկարագրային գիծերը, եթէ կարելի է այսպէս ըսել: Ուստի այս ստորոգելիներով կարելի է զԱստուած ճանչնալ: Այս բոլորը ուրիշ բան չեն եթէ ոչ Աստուծոյ սիրոյ արտայայտութիւնը: Եւ ահա այդ սերն է որ Աստուած կը ցուցաբերէ Իր ժողովուրդին նկատմամբ ողորմութեամբ, բարերարութեամբ, երկայնամտութեամբ ու մանաւանդ ներողամտութեամբ: Որովհետեւ ներելը Աստուծոյ էութեան մաս կը կազմէ: Այդ ներողամտութիւնը Աստուած ցոյց տուաւ մարդուն դրախտէն արտաքսման առաջին օրէն:

Երկրորդ երեսը, սակայն, մարդու անպարտ չթողելը: Որովհետեւ ամէն մէկ արարք ունի իր հետեւանքը, ուրեմն մարդը պիտի կրէ այդ հետեւանքը, Աստուած ներէ կամ ոչ: Մարդուն կողմէ կատարուած անօրէնութիւնը Աստուած կը ներէ, եթէ անշուշտ զղջում եւ խոստովանութիւն կայ ենթակային կողմէ, եւ սակայն, մեղքը իր ներգործութիւնը կ'ունենայ ենթակային կեանքին մէջ: Միւս կողմէ, եթէ Աստուած պատիժներ կը սահմանէ դաստիարակութեան համար, որպէսզի անձը յաջորդին աւելի զգուշ ըլլայ, ինքնագուստ, ինչպէս նաեւ գալիք սերունդներուն համար օրինակ: Ի վերջոյ, Աստուծոյ ներողամտութիւնը, ողորմութիւնը ու գութի սահմանը հետաքրքրականօրէն ներկայացուած է ուր կ'ըսէ. «մինչեւ երրորդ եւ չորրորդ ազգը, սերունդը հապուցանելով», որ կը նշանակէ կարճ ժամկէտ, մինչդեռ Անոր ողորմութիւնը հազարներ:

## ՈՒԽՏԸ ԿԸ ՆՈՐՈԳՈՒԻ (34:10-28)

«Ահա եւ ուխտ մը կ'ընեն: Քու բոլոր ժողովուրդիդ առջեւ այնպիսի սքանչելիքներ պիտի ընեն: Միտքդ պահէ ինչ որ ես քեզի կը պատուիրեմ այսօր: Զգուշացիր քու անձիդ, չըլլայ թէ քու երթալու երկրիդ բնակիչներուն հետ ուխտ ընես, չըլլայ որ անիկա քու մէջդ որոգայթ ըլլայ: Անոնց բազինները կործանեցէք ու անոնց կուռքերը փշրեցէք: Որովհետեւ ուրիշ աստուծոյ երկրպագութիւն պէտք չէ ընես: Քանզի ես Եհովան նախանձոտ Աստուած է: Չըլլայ որ այն երկրին բնակիչներուն հետ ուխտ ընես եւ անոնք իրենց աստուածներուն երեսէն երթալով պռոնկութիւն ըրած արեւին քեզ կանչեն ու դուն անոնց զոհէն ուրես: Եւ չըլլայ որ անոնց աղջիկներէն քու որդիներուդ կին առնես ու անոնց աղջիկները իրենց աստուածներուն երեսէն երթալով պռոնկութիւն ըրած արեւին քու որդիներուդ ալ պռոնկութիւն ընել տան: Քեզի ձուլածոյ աստուածներ մի շիներ»:

Շար յստակ պատուէր մըն է որ կու տայ Աստուած Իր ժողովուրդին: Եթէ երբեք հիմա Ուխտ կը կնքէ Իր ժողովուրդին հետ, ուրեմն յանկարծ չըլլայ թէ այդ ժողովուրդը ուրիշ աստուածներու հետ ուխտ կնքէ, ինչ որ ընդունելի չէ Աստուծոյ համար, որովհետեւ Աստուած Ինք էր զիրենք ազատողը Եգիպտոսի ստրկութենէն:

### ՄՈՎՍԷՍ ՄԻՆԱ ԼԵՌՆԷՆ Կ'ԻՋՆԷ (34:29-35)

Հերաքրքրական երեւոյթ մը կը պարզուի, երբ Մովսէս քառասուն օր եւ քառասուն գիշեր ոչ հաց կերաւ եւ ոչ ալ ջուր խմեց, Մինա լեռնէն վար կ'իջնէ դէմքը լուսափայլ: Մովսէս երեք անգամ Մինա լեռ կը բարձրանայ, բայց միայն երրորդին իր դէմքը լուսափայլ վար կ'իջնէ: Այսպէղ կարելի է նախ այնպէս առնել, որ այն մարդը իր մէջ կը կրէ Աստուծոյ պարուիրանները, Աստուծոյ կը լուսաւորուի ներքնապէս, եւ այդ լոյսին ճառագայթումը կ'ունենայ արտաքնապէս: Միւս կողմէ, նաեւ կայ մէկ այլ ուրիշ երես մը, ուր այս անգամ ժողովուրդը չէր կրնար նայիլ անոր, ուստի քողով ծածկուած էր: Այս երեւոյթին գուգահեռը կրնանք գրնել նոյնինքն Քրիստոսի կեանքին մէջ, երբ Քրիստոս Ինք եւս իր աստուածային փառքով երկրի վրայ միշտ լուսափայլ չերեւցաւ: Անոր փառքը կարծէք մարմնի վարագոյրով ծածկուած էր, որպէսզի կարենային տեսնել գինքը, այլապէս դժուար: Միայն առիթով մը, եբբ ուզեց այդ փառքը ցոյց տալ Իր աշակերտներուն Ռափոր լեռան վրայ, այլակերպութեան օրը, որուն չկրցան նայիլ Իր աշակերտները եւս:

Միւս կողմէ, սակայն, Պօղոս Առաքեալ (Բ Կորնթ 3:7-18)ին մէջ Մովսէսի երեսին լուսափայլութիւնը կը ներկայացնէ իբրեւ Օրէնքի միջոցաւ տրուած փառքը, որ ժամանակաւոր է, իսկ Ս. Հոգիին տրուած լուսափայլութիւնը շար աւելի փառաւոր: Անոր համար ալ Իսրայէլի ժողովուրդը իր հայեացքը երբեք չկարեց Օրէնքէն զայն նկատելով գերագանց, եւ արոր համար ալ չկրցաւ տեսնել այն ինչ որ այդ օրէնքը կ'ուզէր մատնանշել, որ նոյնինքն Հոգիին փառքն էր, Քրիստոսով եկած փրկութեան պարգեւը, եւ անոր բերած փառքը: Արոր համար ալ երբ կը կարդան Օրէնքը, անոնց միտքերը քոց են, քողով ծածկուած, եւ այդ քողը կը վերցուի երբ որ գՔրիստոս ճանչնան: